<<Քայլ առ Քայլ >> Բարեգործական հիմնադրամ

<<Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման >> ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա ՝ Սաների մեջ ինքնուրույնության , նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը.

Դաստիարակ՝ Ադոյան Նաիրա
Մանկապարտեզ՝ <<Աշոտ Խաչատրյանի անվան թիվ 80 մսուր մանկապարտեզ >>

Երևան 2023 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

1. Սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը.....5
2. Փորձարարական հետազոտություն……8

2.1.Խմբի նկարագիրը……9

2.2.Փորձարարական մաս……9

3. Վերլուծություն……11

Եզրակացություն……14

Օգտագործված գրականության ցանկ……16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Ստեղծագործական միտքը բաղկացած է նոր բան հորինելու, հնարելու ունակությունից, փոփոխություններ և նորամուծություններ ընդունելու ունակությունից, գաղափարների և հնարավորությունների փորձեր կատարելու ցանկությունից, աշխարհայացքի ճկունությունից, կատարելագործման ուղիների մշտական որոնումներից, գործընթաց, որի արդյունքը բոլորովին նոր պատկերների ստեղծումն է:

Կրթության և դաստիարակության գործընթացում ստեղծագործ անհատականության ձևավորումը և զարգացումը ժամանակակից կրթական համակարգի կարևոր բաղադրիչներից է:

Մեր օրերում ստեղծարարությունը հռչակված է մարդկային ցանկացած գործունեության անբաժանելի մաս: Որպես կրթության բարձրագույն նպատակ՝ սահմանվում է ինքնազարգացող, ստեղծագործաբար մտածող ու գործող սովորողի ձևավորումը, ով ունակ է ստեղծագործաբար մտածելու, անորոշության պայմաններում լուծում փնտրելու, իմաստավորելու և վերաիմաստավորելու, ինտելեկտուալ դժվարությունները հաղթահարելու:

Մայրենիի պարապմունքի ընթացքն ապահովելու համար կարելի է կիրառել մի շարք այլ փոխգործուն մեթոդական հնարներ, որոնցից են՝ շրջանը, վերնագրեր մեթոդը, զանազան աղյուսակներ, մետաիմացության թերթիկներ, ճիշտ է, թե ճիշտ չէ, խառնված հերթականություն և այլն: Այնուամենայնիվ հարկ է նկատել, որ ցանկացած մեթոդ կիրառելիս դաստիարակը պետք է վստահ լինի մեթոդի արդյունավետության, իրատեսության մեջ:

Աշխատանքի նպատակը և խնդիրները: Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել ***սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը:***

Նշված նպատակն իրագործելու համար աշխատանքի հիմքում դրվել և լուծվել են հետևյալ հիմնական **խնդիրները.**

- ուսումնասիրել սովորողների ստեղծագործական կարողությունների ձևավորման նախադրյալները,

- ներկայացնել սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացման օրինաչափությունները:

Աշխատանքի մեթոդական և տեղեկատվական հիմքերը: Աշխատանքում առաջադրված խնդիրների լուծման համար մեթոդական հիմք են ծառայել մի շարք հեղինակների կողմից իրականացված հետազոտությունները, հրապարակված գիտական աշխատությունները և դրանցում ներկայացված տեսակետները:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Աշխատանքային տեքստը կազմում է 16 տպագրական էջ:

1. ՍԱՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Ստեղծագործությունը որպես ունակություն ինքնարտահայտման ակտիվ ձև է, որը կարող է իրականացվել ցանկացած ձևի միջոցով՝ բառ կամ շարժում, նկար կամ քանդակ, բանաստեղծություն կամ մեղեդի[1]:

Ուսուցման արդյունավետությունը չափվում է ոչ միայն և ոչ այնքան սովորողի յուրացրած գիտելիքներով, որքան նրա ձեռք բերած կարողություններով՝ շեշտը դնելով արդյունքի վրա, այսինքն՝ ինչ կարող է նա անել: Այս խնդիրը լուծելի է դառնում, երբ ուսուցման ընթացքում վերաբաշխվում են հիմնական արժեքները:

Ուսումնառության ընթացքում ուսումնառողը պասիվ ընկալողից վերածվում է ակտիվ և գործուն մասնակցի,իսկ դաստիարակը հրաժարվում է սովորեցնողի, վերահսկողի, խրատողի իր դերից՝ դառնալով այդ գործընթացի կազմակերպող, խորհրդատու և որպես գործընկեր՝ ուսումնառողի հետ մասնակցում է հետազոտական աշխատանքներին:

Մինչև այսօր ուսուցում – ուսումնառություն գործընթացում մենք ճանաչել ենք երկու կողմ՝ սուբյեկտ, այսինքն՝ դաստիարակը, որը սովորեցնում է, և օբյեկտ՝ սանը, որին սովորեցնում են: Իսկ ժամանակակից մանկավարժությունը նույն գործընթացում տարբերակում է երկու սուբյեկտ: Ուսումնառության ընթացքում թե՛ դաստիարակը, թե՛ սանը փոխգործուն հարաբերությունների մեջ են:

Այսօր ստեղծագործական գործունեությունը բարձր է գնահատվում և մանկավարժական գիտությունը կենտրոնական խնդիրներից է համարում կրթության ազդեցությունը անհատի ստեղծագործական զարգացման վրա:

Ներկայումս կրթական համակարգի բարեփոխումների առանցքային հիմնահարցերից մեկը սովորողների կրթության, ուսուցման և ստեղծագործական զարգացման առավել օպտիմալ ուղիների որոնումն է:

[1]Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցև Գ. Ա., Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987թ., էջ 47:

Սովորողի ստեղծագործական զարգացումը հիմնականում իրականացնում է մանկապարտեզը և դպրոցը:

Ազատ, ինքնուրույն գործունեության ընթացքում մշակվում են հասակակիցների խմբերում գործելու ունակություն (համագործակցել, մրցել) մանկական հաղորդակցման համար անհրաժեշտ որակներ:Երեխան ինքնահաստատման հնարավորություն է ստանում , դառնալով իրերի, գործողությունների , հարաբերությունների տեր, նա ինքն իրեն հարգելու, ինքնաճանաչողականության որակ է ձեռք բերում :

Հիմնվելով իրենց ունեցած գիտելիքների , կարողությունների և ունակությունների վրա , նրանք ցանկության դեպքում կարող են ինքնուրույն զբաղվել դեկորատիվ կիրառական գործունեությամբ ՝ նկարել , ծեփակերտել բնական նյութերով ինքնաշեն խաղալիքներ պատրաստել և այլ: Իրենց նախաձեռնությամբ երեխաները կարող են ունկնդրել երաժշտական ձայնագրություններ, նվագել նվագարաններով , կազմակերպել համերգներ , պարեր, հորինել , պատմել հեքիաթներ, կազմակերպել թատերականացված ներկայացումներ և այլն: Այստեղ դաստիարակի խնդիրը բազմազան առարկայական միջավայր ստեղծելն է : Երեխաների ազատ , ինքնուրույն գործունեությանը դաստիարակը միջամտում է միայն այն դեպքում , երբ վեճերի իրավիճակներ է առաջանում կամ երբ երեխան ցանկանում է միանալ որևէ խմբի , բայց վարքի համապատասխան հմտություն չունի :Շարունակել մարդասիրական զգացմունքների ձևավորումը՝ նկատի ունենալով , որ դրանց դաստիարակմանը կարող են խանգարել երեխաների նկատմամբ սիրո , քնքշանքի և ջերմության պակասը: Նրբանկատորեն հայտնել սեփական կարծիքը ու մերժումը:

Սեփական վարքը ղեկավարելու կարողությունը ներգործում է երեխայի ուշադրության , հիշողության , մտածողության վրա : Ուշադրությունը դառնում է ավելի կայուն, ծագում է կամայնորեն մտածելու ընդունակություն : Կամային մտապահմանը նպաստում է պրակտիկ գործունեության համար նշանակություն ունեցող նյութը (խաղի, դաստիարակի հանձնարարությանը հաղորդելու , մեծի պահանջը կատարելու համար ինչ որ բան հիշելը:)Շրջապատի դիտումների և սենսոր նպատակաուղղված դաստիարակության ազդեցության տակ կատարելագործվում է ըմբռնումը : Երեխաները գնահատում են ոչ միայն առարկայի յուրահատկությունները, այլ յուրահատկությունների էությունը, նրանք զգում են գրական ստեղծագործության բնույթը ,

տրամադրությունը(նույնպես և երաժշտության ու կերպարվեստի) տարբերում են դրանց ժանրային առանձնահատկությունները , ձևը արտահայտչականության – պատկերավորության միջոցները։Էական տեղաշարժեր են կատարվում տարածության մեջ կողմնորոշվելու կարողություններում ։ Երեխաները վստահորեն են որոշում տարածության ուղղությունը , առարկաների փոխադարձ դիրքը՝ ենթադրվող տարածական իրադրություններում , նկատում են շենքի կահավորման և ձևավորման փոփոխությունները։

Նախադպրոցական տարիքում զարգանում են դիտողական-պատկերավոր մտածողության բարձր ձևերը, որոնց հիման վրա հնարավոր է դառնում ընդհանրացնող գիտելիքների ձևավորումը ։ Երեխաները սկսում են ոչ միայն առանձնացնել առարկաների և երևույթների ընդհանուր հատկությունները, այլև սահմանում են դրանց միջև պարզագույն կապեր։ Շարունակում են կատարելագործվել երեխայի խոսքի բոլոր կողմերը, արտասանությունը դառնում է մաքուր։ Երեխաները տիրապետում են լեզվի քերականական կառուցվածքին և դրանից օգտվում բավական ազատ, ընդարձակվում է բառապաշարը։ Խոսքը դառնում են ավելի կապակցված , երեխաները ընդունակ են դառնում կազմելու ոչ մեծ սյուժե ունեցող պատմվածքներ։

Սովորողը նույնպես դժվարություններ ունի հարմարվելու ակտիվ ուսուցմանը, ինքնքկրթության մեթոդներին, ուստի դաստիարակի խնդիրն է նրան հասկանալի դարձնել, թե ինչ է անելու,ինչպես և ինչու: Սովորողը պետք է տեղյակ լինի, թե ինչ են ակնկալում իրենից, վստահ լինի, որ դաստիարակն իրեն աջակցելու, օգնելու և առաջնորդելու է[2]:

Պարզ է, որ շատ ու շատ մեթոդների իմացությունը անհրաժեշտ է, բայց դեռ բավարար չէ դրանք հմտորեն կիրառելու, ակնկալիքներն արդարացնելու, նորարարությունն ապահովելու և բարեփոխումները իրականացնելու համար:

Ծանր, աշխատատար ու լուրջ պատասխանատվություն ունի ուսուցիչը: Ի՞նչ սովորեցնել, ինչպե՞ս սովորոցնել և ինչու՞ սովորեցնել հարցադրումները կազմում են ուսուցման գործընթացի միջուկը, որտեղ մեթոդն ունի կապող օղակի բարդ և առանձնահատուկ դեր:

[2]Զաքարյան Վ., Ափյան Հ., Մանկավարժական միտք, Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառության հնարավորությունը ուսուցման գործընթացում,Երևան, 2014թ.,էջ 104։

Վերջին հաշվով՝ դաստիարակի նպատակն է, որ խմբային աշխատանքների ժամանակ սովորողն ակամայից ներգրավվի դասի ընթացքին, փորձի իր ներդրումը բերել խմբին աշխատանքը վերջնարդյունքին հասնելու համար: Իսկ ահա անհատական աշխատանքների իրականացման ժամանակ ուսուցման գործընթացի կենտրոնում սովորողի անհատականությունն է:

Հաճախ սովորողի անհատական արդյունքները զարմացնող են լինում, քանի որ, երբ վերջինս գիտակցում է, որ հիմնական պատասխանատվությունը հենց իր վրա է, հավաքում է իր ողջ ներուժն ու գերազանց կատարում տրված առաջադրանքը: Ահավասիկ, ուսումնական ընթացքի հաջողությունը մեծապես կախված է հենց դաստիարակի աշխատանքի ձևից, ուստի դաստիարակը պետք է ունենա աշխատանքի իր հաջողված մոտեցումը՝ յուրաքանչյուր սանի առանձնահատկություններին համապատասխան:

Այս համատեքստում դաստիարակը պետք է.

- Սանին հնարավորություն տա ինքնուրույն զննել, ենթադրություններ անել, հայտնաբերել, կռահել, ճանաչել, համեմատել, ինչը ժամանակակից մանվարժությունն անվանում է գիտելիքների կառուցում:
- Ուսուցման բովանդակությունը համապատասխանեցնի սաների հետաքրքրություններին:
- Ստեղծի այնպիսի հաղորդակցական իրավիճակներ, որոնք հրապուրիչ կլինեն սաների համար:
- Սաների առջև դնի իրական, հաղթահարելի խնդիրներ և նպատակներ, որպեսզի յուրացնան ընթացքում նրանք զգան հաջողության հաճույքը:
- Խրախուսի հաջողությունը, գնահատի առաջընթացը:
- Ամեն կերպ խրախուսի սովորողի նախաձեռնողականությունը, ցույց տա կարեկցանք, այսինքն՝ սանը իմանա, որ դաստիարակը միշտ կօգնի իրեն, բայց ուզում է, որ նա ինքնուրույն աշխատի և գտնի խնդրի լուծումը:
- Ստեղծի այնպիսի միջավայր, որտեղ սովորողը կկարողանա հաղթահարել իր վախերն, հասկանալ, որ ձախողումը ոչ մի վատ բան չունի իր մեջ ու կիսվել իր ստեղծարար գաղափարներով:

- Առաջարկել գաղափարներ, բայց չխառնվել, այսինքն՝ չմիջամտել, թույլ տալ իրավիճակից դուրս գալու ելք գտնել ինքնուրույն, որը հաճախ կարող է ունենալ նույնիսկ անսովոր և նորովի լուծում[3]:

Այսպիսով, սովորողի թե' հաջողությունների, թե' պարտությունների համար իր պատասխանատվության հիմնական բաժինն ունի դաստիարակը, ում համակողմանի աշխատանքի արդյունքը ինքնուրույն, նախաձեռնող ու ստեղծարար սերունդն է:

2. ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

2.1.Խմբի նկարագիրը

Իրականացնելով փորձարարական հետազոտություն, մեր կողմից նպատակ էր առաջադրվել երեխաների մեջ ձևավորել ստեղծագործական կարողությունները:

Սաների ստեղծագործական կարողությունների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև սաների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում:

Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ դաստիարակը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով սաներիմեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք:

2.2.Փորձարարական մաս

[3]Մուդրիկ Ա. Վ., Դպրոցականի անձը և նրա դաստիարակությունը կոլեկտիվում, Երևան, 1986 թ., էջ 58:

Հետազոտության նպատակն է գրական երաժշտական միջոցառումների կազմակերպման օրինաչափությունների միջոցով սաների մեջ ձևավորել ստեղծագործական կարողությունները ։

Հետազոտության ընթացքում մենք մասնակից եղանք գրական երաժշտական միջոցառմանը, որը նվիրված էր Հայաստանի 12 մայրաքաղաքներին: Այս միջոցառումը երեխաների մոտ կձևավորի հայրենասիրություն: Նախադպրոցական տարիքի երեխաների մեջ հայրենասիրական արժեքների ձևավորումը բավականին մեծ կարևորություն ունի:

Սաները սիրով ու բարձր տրամադրությամբ ներկայացրին բոլոր 12 մայրաքաղաքների հակիրճ պատմությունն ու մշակույթը: Միջոցառման ընթացքում հնչեցին նաև ուրախ երգ, պար, երաժշտություն:

Հիմնականում գրական երաժշտական միջոցառումների կազմակերպումը ունի երեք նպատակ՝ համախմբել պարապմունքների ընթացքում ձեռք բերված նոր գիտելիքները, կատարելագործել և ամրապնդել այն գիտելիքները, որոնք սովորողը ստացել է նախորդ

պարապմունքների ընթացքում և սովորողի կողմից գիտելիքների ինքնուրույն ձեռքբերումը, այսինքն՝ արտադասարանական աշխատանքների ընթացքում սաներին չի մատուցվում պատրաստի գիտելիք:

Գրական երաժշտական միջոցառումները ժամանակակից մեթոդիկայի նորույթներից մեկն են: Գրական երաժշտական միջոցառումները միավորում են տարբեր առարկաների մասնագետների ուժերը և ստեղծում միջառարկայական կապերով հարուստ դասերի օրինակներ:

Գրական երաժշտական միջոցառումները ոչ միայն արդյունավետ են սաների համար, այլ նաև դաստիարակներին մղում են ինքնակատարելագործման, դաստիարակները ձեռք են բերում նոր հմտություններ, զարգացնում թիմում աշխատելու կարողություններ և ձևավորում միջանձնային ջերմ հարաբերություններ:

3. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սաների ստեղծագործական կարողությունների ձևավորման համար մայրենիի դասաժամի ընթացքում մեծ դեր և նշանակություն ունեն հեքիաթները:

Մանկապարտեզում ամենից հաճախ հանդիպող նյութերից մեկը հեքիաթներն են: Հեքիաթները ժողովրդական բանահյուսության ամենահին ու ամենատարածված ստեղծագործություններից են, դրանք ծագել են մարդկության մանկության շրջանում, սակայն այսօր էլ շարունակում են ստեղծվել և հուզել ընթերցողներին իրենց անմիջականությամբ, պարզությամբ ու խոր լավատեսությամբ:

Կրտսեր տարիքի երեխաներին տարրական դասարաններում հանձնարարելի են համարվում կենդանագրական ու իրապատում հեքիաթները միայն, իսկ հրաշապատում հեքիաթները սովորաբար այդ տարիքի երեխաների խորհուրդ չի տրվում կարդալ:

Ներկայացնենք պարապմունքի նմուշ.

Խումբը-<<Կրտսեր երկրորդ>>

Թեմա-Բնանկարչություն: Թեմատիկ աշխատանք՝ <<Եղանակներ>>

Նպատակը.

1. Հայրենի երկրի բնաշխարհի նկատմամբ սիրո, հետաքրքրության և հոգատարության ձևավորում:

2. Կերպարվեստի ժանրերի, ջրաներկի ճիշտ օգտագործման, գույների և երանգների մասին պատկերացման ձևավորում:
3. <<Տարվա եղանակները>> բեմականացման ներկայացում, միջառարկայական կապի ապահովում:

Կահավորումը-Տարվա տարբեր եղանակների բնապատկերներով նկարներ, գեղեցիկ ձևավորված ամանեղեն, սպասք, կահույք, գորգեր, խաղալիքներ, գործվածքեղեն, խեցեղեն, ջրաներկ, գունավոր մատիտներ, յուղամատիտներ, գունավոր կավիճներ, նկարչական ալբոմներ, մոլբերտներ (նկարելու համար հենարան) և այլն:

Մեթոդները - Պրիզմա, Պատկերասրահ:

Պարապմունքի համառոտ ընթացք

Երեխաները ներկայացնում են նախորդ պարապմունքերին անցած գիտելիքները կերպարվեստի ճյուղերի և ժանրերի մասին: Նշում են հիմնական և բաղադրյալ գույների մասին, առավել պատկերավոր և ուսանելի դարձնելու համար կիրառում են <<Պրիզմայի>> մեթոդները:

Կերպարվեստն ունի չորս հիմնական տեսակ՝ գունանկարչություն, գրաֆիկա, քանդակագործություն, դեկորատիվ-կիրառական արվեստ: Կերպարվեստի տեսակները հեշտությամբ կարելի է միմյանցից տարբերել իրենց կատարման նյութերով, գործիքներով, աշխատելաձևով:

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԹԵՄԱՆ՝ <<ԲԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՂԻԿ>>

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻՆ՝

Նախապես դաստիարակը երեխաների համար պատրաստում է 7 գույնով ծաղիկ: Աշխատանքը սկսելուց առաջ նախապատրաստում է անհրաժեշտ պարագաները, դիդակտիկ նյութերը, այնուհետ երեխաները սկսում են աշխատանքը:

ԴԻԴԱԿՏԻԿ ՆՅՈՒԹԵՐ՝ նախօրոք պատրաստված 7 գույնով ծաղիկ , բարությունը բնութագրող ոտանավոր կամ հանելուկ, մուլտֆիլմ:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՐԱԳԱՆԵՐ՝ նկարչական պարագաներ, հիգիենայի պարագաներ:

ՆՊԱՏԱԿԸ. պարապմունքի նպատակն է՝ կերպարվեստի միջոցով զարգացնել երեխայի բարոյական որակները, գունազգացողությունը:

ԽՆԴԻՐՆԵՐԸ.

1. Երեխաներին ծանոթացնել հեքիաթի բովանդակությանը, հեղինակին,

2. ծաղկի պատկերման եղանակներին,
3. ընդլայնել երեխաների բարոյական որակները,
4. փոխանցել գիտելիքներ գույների և դրանց երանգների վերաբերյալ:

ԿԻՐԱՌՎՈՂ ՄԵԹՈԴ ՆԵՐ.

Դիտման, զննման, ցուցադրման, խոսքային, վերլուծության, հարց ու պատասխանի, համագործակցության մեթոդները:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՄԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ.

1. պարապմունքը սկսելուց առաջ դաստիարակը երեխաների հետ զրույց է անցկացնում (3-5 րոպե),
2. նրանց հարցնում է, թե ինչ գիտեն ծաղիկները մասին,
3. ցույց է տալիս ծաղիկների նկարներ,
4. տեղեկություններ է տալիս նրանց մասին՝ թե ինչպիսի ծաղիկներ են լինում,
5. ծաղկի հատկանիշները բնութագրող հանելուկ կամ բանաստեղծություն է ընթերցում,
6. ցույց է տալիս նախապես պատրաստված ծաղիկը,
7. այնուհետև սկսում է բացատրել ծաղիկների նկարելու եղանակը, որ նկարելիս պետք է ամեն ինչ համաչափ և կոկիկ լինի:

ԸՆԹԱՑՔԸ. պարապմունքը սկսվում է <<Յոթնագույն ծաղիկ>> հեքիաթի ընթերցանությամբ: Ընթերցելուց հետո հարց ու պատասխանի միջոցավ ծանոթացնում ենք հեքիաթի սյուժեին: Երեխաների ուշադրությունը հրավիրվում է հեքիաթի այն հատվածի վրա, երբ աղջկա ձեռքին գտնվող յոթնագույն ծաղկի թերթիկներից մեկ հատ էր մնացել: Աղջիկը բոլոր թերթիկները անիմաստ օգտագործել էր, բայց վերջին թերթիկով բարի գործ էր կատարել՝ օգնել էր հաշմանդամ մի տղայի, որը հետագայում դարձել էր իր ամենամտերիմ ընկերը:

ԱՄՓՈՓՈՒՄ (3-5 րոպե). Նկարելուց հետո վերլուծվում է յուրաքանչյուր երեխայի նկարը և միասին գալիս են այն եզրահանգման, որ եթե բոլորը իրենց ծաղկի վերջին թերթիկով բարի գործեր անեն, ապա աշխարհում կտիրի բարություն և ոչ ոք չի տխրի: Աշխատանքը անվանվեց <<բարություն>>: Այս աշխատանքի միջոցով երեխաների մեջ

առաջացրինք հոգատար վերաբերմունք հաշմանդամների և ընկերների նկատմամբ: Երեխաների մեջ առաջանում էք բարի գործ կատարելու ցանկությունը: Միաժամանակ ամրապնդվում է <<7>> գույների և նրբերանգների իմացությունը:

. Տնօրենի և Մանկավարժի դիտարկումը

Ծրագրային նյութը համապատասխանում էր տարիքային խմբին:
Այս խմբի փոքրիկների մոտ բավականին զարգացած է խոսքը լսելու, ըմբռնելու և հանձնարարականները ճշտորեն կատարելու կարողությունը :

Պարապմունքին առկա էր հարուստ և գունեղ դիդակտիկա , որի միջոցով խաղ-պարապմունքը դարձավ ավելի հետաքրքիր :

Ողջ պարապմունքի ընթացքում գրեթե բոլոլ երերխանները ակտիվ էին : Խմբային քննարկման միջոցով դաստիարակը կարողացավ վերհանել երեխաների ուեցած գիտելիքները, նոր ներկայացվող նյութի վերաբերյալ : Նոր ու հին իմացությունները շաղկապելով ստացվեց հետաքրքիր խաղ-պարապմունքը:

Ընկեր Նաիրան իր հետևողական և սիստեմատիկ աշխատանքի արդյունքում հասավ իր ցանկալի արդյունքին :

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքում հանգել ենք հետևյալ եզրահանգումներին.

- Ամփոփելով հարկ ենք համարում նշել, որ ստեղծագործությունը որպես ունակություն ինքնարտահայտման ակտիվ ձև է, որը կարող է իրականացվել

ցանկացած բանի միջոցով՝ բառ կամ շարժում, նկար կամ քանդակ, բանաստեղծություն կամ մեղեդի:

- Ուսուցման արդյունավետությունը չափվում է ոչ միայն և ոչ այնքան սովորողի յուրացրած գիտելիքներով, որքան նրա ձեռք բերած կարողություններով՝ շեշտը դնելով արդյունքի վրա, այսինքն՝ ինչ կարող է նա անել: Այս խնդիրը լուծելի է դառնում, երբ ուսուցման ընթացքում վերաբաշխվում են հիմնական արժեքները:
- Ուսումնառության ընթացքում ուսումնառողը պասիվ ընկալողից վերածվում է ակտիվ և գործուն մասնակցի,իսկ դաստիարակը հրաժարվում է սովորեցնողի, վերահսկողի, խրատողի իր դերից՝ դառնալով այդ գործընթացի կազմակերպող, խորհրդատու և որպես գործընկեր՝ ուսումնառողի հետ մասնակցում է հետազոտական աշխատանքներին:
- Մինչև այսօր ուսուցում – ուսումնառություն գործընթացում մենք ճանաչել ենք երկու կողմ՝ սուբյեկտ, այսինքն՝ դաստիարակը, որը սովորեցնում է, և օբյեկտ՝ սանը, որին սովորեցնում են: Իսկ ժամանակակից մանկավարժությունը նույն գործընթացում տարբերակում է երկու սուբյեկտ: Ուսումնառության ընթացքում թե՛ դաստիարակը, թե՛ սանը փոխգործուն հարաբերությունների մեջ են:
- Այսօր ստեղծագործական գործունեությունը բարձր է գնահատվում և մանկավարժական գիտությունը կենտրոնական խնդիրներից է համարում կրթության ազդեցությունը անհատի ստեղծագործական զարգացման վրա:
- Ներկայումս կրթական համակարգի բարեփոխումների առանցքային հիմնահարցերից մեկը սովորողների կրթության, ուսուցման և ստեղծագործական զարգացման առավել օպտիմալ ուղիների որոնումն է:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցև Գ. Ա., Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987թ.:
2. Զաքարյան Վ., Ափյան Հ., Մանկավարժական միտք, Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառության հնարավորությունը ուսուցման գործընթացում,Երևան, 2014թ.:
3. Մուդրիկ Ա. Վ., Դպրոցականի անձը և նրա դաստիարակությունը կոլեկտիվում, Երևան, 1986 թ.: